# ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Մոսկուայի 15 հայ ուսանողներից խմբագրութիւնս ստացաւ մի նամակ, որով նոքա խնդրում են մեզ տպել «Մուրճ»-ում նոցա բողոքը՝ ուղղած բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանցի մի գրուածքի դէմ, և թէ պ. Մկրտիչ Բարխուդարեանցի դէմ, որը այդ գրուածքը հիւրընկալել է «Գրական և Պատմական Հանդէսում»։ Ահա այդ գրութիւնը.

«Խորին ցաւանքով կարդացինք «Հանդէս գրականական և պատմական» հրատարակութեան երկրորդ գրքում տպած Սիւլիւկի «Սատանայի Օջիղ» պատկերը։ Ցաւ է տեսնել, որ մեր մանուկ գրականութիւնը աշխատում են դարձնել անձնական կեղտոտ հաշիւների և կրքերի ասպարէզ և այն՝ այնպիսի մի հեղինակ, որի երգերը միշտ ոգևորել են հայ ժողովրդին համակրելի զգացմունքներով։ Առանց զայրոյթի չի կարելի կարդալ այդ կեղտոտ հայհոյանքները և ստոր զրպարտութիւնների հաւաքածուն, որին զոհ է դարձել մեր հոգևորականութեան ամենայարգելի ներկայացուցիչներից մէկը, մի վարդապետ, որին բոլոր մօտիկից ճանաչողները համարում են անպայման բարոյական անձնաւորութիւն։ Մենք բողոքում ենք յանուն սրբապղծուած հայ գրականութեան և ոտնակոխ արած մարդկային պատուի՝ Սիւլիւկի և հրատարակիչ պ. Մ. Բարխուդարեանցի դէմ, որ ուսանողական նստարանի վերայից տեղ է տուել իւր «Հանդէս»-ում այդպիսի զզուելի պատկերին։

Տ. Յովհաննիսեան, Մկրտիչ Տէրեան, Յ. Ամիրխանեանց, Մ. Մուրադեանց, Մ. Շաթիրեանց, Գէորգ Զուբար, Լեոն Պարոնեանց, Ս. Աբրահամեանց, Ա. Ծատուրեանց, Վ. Վարդանեանց, Գ. Տէր-Ղազարեանց, Ար. Զարգարեանց, Յ. Յովհաննիսեան, Ն. Գոնեանց, Յ. Իգիթեանց։»

«Մուրճ»-ի խմբագրութիւնը ուրախութեամբ տպում է այս գրութիւնը, յոյս ունենալով, որ դորանով նա նպաստած կը լինի գրական բարքերի մաքրւելուն։ Իսկ միւս կողմից՝ մենք մեծ շահ ունինք, որ պաշտպանելու մի մարդու պատիւ, որը կարողացել է այդքան բարի անուն վաստակել թէ իւր բազմաթիւ ծանօթների և թէ մանաւորապէս ուսանողական երիտասարդութեան մօտ։ Սակայն հարկ ենք համարում նկատել այժմեանից, որ ստորագրողների բողոքի հետ միացնելով մերը, մենք այն չենք ուղղում նաև պ. հրատարակչի դէմ, որը կարող էր այդ դէպքում անգիտակ լինել իւր աշխատակցի անձնական դիտաւորութիւններին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ